Nagorno-Karabakh conflict precipitates a new regional order

https://www.aljazeera.com/opinions/2020/10/8/nagorno-karabakh-conflict-precipitates-a-new-regional-order/

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը տանում է տարածքային նոր կարգի հաստատման

Հակամարտության հավանական անցումը Եվրո-ատլանտյան հարցից տարածաշրջանայինի ցույց է տալիս, որ ոչ՝ Ռուսաստանը, ոչ՝ Թուրքիան Արևելքին իրենց տարածաշրջանում գործող կողմ այլևս չեն համարում:

Ըստ Ասպետ Քոչիկյանի

Քոչիկյանի հետազոտությունների ոլորտը Մերձավոր Արևելքում և նախկին Սովետական միության տարածքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական բախումներն են: Վերջին 20 տարիների ընթացքում նա Հայաստանում, Վրաստանում, Իրանում, Իրաքում և Սիրիայում ծավալուն հետազոտություններ է անցկացրել քաղաքական կարգերի և պետական հաստատությունների, քաղաքացիական/էթնիկ պատերազմների և հասարակական շարժումների (հեղափոխությունների) ոլորտում: Ներկայումս նա Բոստոնի Բենթլի համալսարանում միջազգային ուսումնասիրությունների բաժնի ավագ դասախոս է:

Հոկտեմբերի 8 2020թ.

Քանի դեռ լայնամասշտաբ պատերազմը Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվում է առանց կայուն և հստակ տվյալների երկու կողմերի ձեռքբերումների վերաբերյալ, մի բան պարզ է դառնում, որ այս պատերազմի հետևանքներն ավելի մեծ են լինելու քան զոհվածների թվաքանակը, քանի որ հակամարտությանը լուծում գտնելու նպատակով տարածաշրջանային նոր կաղապար է սկսում ձևավորվել:

Լեռնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև սառեցված հակամարտության վերսկսումը ամիսներ է տևել: Հուլիսին, Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային շփումներից հետո, Անկարան օգոստոսին բազմապատկեց իր հակահայկական հռետորաբանության ծավալները, հաշվի առնելով նաև Սևրի

պայմանագրի հարյուամյակը և հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին տեղի ունեցած թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունները: Ավելի ուշ, Թուրքիայի ընդլայնվող ռազմական աջակցության և Ադրբեջան ռամամթերքի տեղափոխման մասին լուրեր սկսեցին շրջանառվել:

Սեպտեմբերի 27-ի մեծամասշտաբ բախումներից միայն օրեր առաջ տեղի ունեցած Միացյալ ազգերի գլխավոր ասամբլեաի յոթանասունհիներորդ ժողովի ժամանակ Հայաստանի և Ադրբեջանի առաջնորդների ելույթները նույնպես ակնարկում էին հնարավոր սրացմանը: Իրենց ելույթներում և՛ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, և՛ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը զգուշավորություն էին ցուցաբերում: Փաշինյանը իր խոսքը կենտրոնացրեց Թուրքիայի աճող ներգրավվածության վրա, իսկ Ալիևը խոսեց դիվանագիտական առաջընթացի բացակայության և Հայաստանի կողմից շարունակվող անզիջողականության մասին:

Դեռ 1990-ական թվականների սկզբից Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծմանն ուղված բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի (Եվրո-ատլանտյան դաշինք, որի անդամ են նաև Ռուսաստանը և Թուրքիան) հիմնախնդիրներից մեկն է եղել: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, Մինսկի խմբին իր գործունեության ընթացքում չի հաջողվել զգալի արդյունքների հասնել, հատկապես Ադրբեջանի կարծիքով Մինսկի խումբը չի կարող կամ չի ցանկանում հակամարտությանը արդյունավետ լուծում տրամադրել:

Սրացմանը վերաբերող Ռուսաստանի և Թուրքիայի պաշտոնական արձագանքներից վերլուծաբանները կարծիք կազմեցին, որ վերջին բախումները հնարավոր է հակամարտության սահմանների տեղաժարժի պատճառ հանդիսանան, որի արդյունքում Եվրո-ատլանտյան խնդրից հակամարտությունը կվերածվի տարածաշրջանայինի: Այդ տեղաշարժի արդյունքում, Թուրքիայի անթաքույց աջակցությունը և ռազմական ներկայությունը Ադրբեջանում, արժանացել են Ռուսաստանի չեզոք արձագանքին, որը դրսևորվել է երկու կողմերին պատերազմը չսրացնելու կոչով. մի քայլ, որը Ռուսաստանի՝ որպես Հայստանի ռազմավարական դաշնակից լինելու ընկալումը կասկածի տակ է դնում:

Բացի այդ, Թուրքիայի՝ հակամարտությանը ակտիվ (թեկուզ թվացյալ զուսպ) մասնակցությունը, մի տարածքում, որտեղ Ռուսաստանը պարտավորություններ ունի, կարելի է նաև դիտել Մոսկվայի և Անկարայի՝ օտար քաղաքական առաջնագծերում ձեռքբերումների հասնելու ձգտման տեսանկյունից: Այսպիսով, նույնիսկ երբ Թուրքիան և Ռուսաստանը Սիրիայի և Լիբիայի քաղաքացիական պատերազմների տարբեր կողմերում են գտնվում, երկուսն էլ ընդհանուր համաձայնության են եկել Արևմտյան քաղաքականության և նույնիսկ ռազմական (Թուրքիայի դեպքում ՆԱՏՕ-ի) հարացույցից հեռանալու պարագայում: Տեղաշարժը հնարավոր է նաև բացատրել Ռուսաստանի Պրիմակովյան ուսմունքի (անվանված Ռուսաստանի նախկին արտաքին գործերի

նախարար և վարչապետ Յեվեգենի Պրիմյակովի անունով) վերահաստատման փորձերով, ըստ որի Ռուսաստանը պետք է տարածքային դաշնակցություն կազմի ԱՄՆ-ի գլոբալ գերիշխանությանը դիմակայելու նպատակով:

1.Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիպ Էրդողանը և Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ձեռք են սեղմում Մոսկվայում Կրեմլում սեղի ունեցած հանդիպմանը հաջորդած մամլո ասուլիսից հետո. Ռուսաստան Մայիսի 5 2020

Տարածաշրջանից դուրս շատերը այն կարծիքին են, որ Լեռնային Ղարաբաղի սառեցված պատերազմի վերսկսումը Մոսկվայի և Անկարաի միջնորդավորված պատերազմի նոր գլուխ է: Բայց, ավելի ուշադիր զննության արդյունքում, պարզ է դառնում, որ երկու կողմերն էլ առաջացված հակամարտության արդյունքում փորձում են տարածաշրջանում իրեն ազդեցությունը մեծացնել՝ միառժամանակ արևելյան ուժերին հեռու պահելով:

Թուրք-ռուսական բարեկամա-պատերազմական կապերի պարադոքսը առավելագույը նկատելի էր, երբ 2015թ.-ի նոյեմբերին թուրքական երկու կործանիչներ Սիրիայի հետ ունեցած Թուրքիայի սահմանին Ռուսական ռազմական ինքնաթիռ պայթեցրին: Անկարայի հետ լարվածության սրացման փոխարեն, Մոսկվան որոշեց Թուրքիայի սիրիական դաշնակիցներին ռմբակոծել, և արդեն մինչև 2016թ.-ի կեսերը իրադարձությունը իբրև թե մոռացվել էր, երբ երկու երկրները հայտարարեցին իրենց կապերի վերսկսման մասին: Մինչև 2019թ. թուրք-ռուսական կապերը բավականին բարեդրացիական էին, այնպես որ երկու երկրները ռազմական համաձայնության եկան, որը Անկարաի համար ճանապարհ բացեց Ռուսական արտադրության ցամաք-երկինք հրթիռների գնման համար:

Բացի իրենց ընդհանուր կասկածներից և Արևմուտքին ուղղված հակադիր կեցվածքից, և՛ Ռուսաստանը, և՛ Թուրքիան, վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձություններից առիթ ստանալով, խորացրել են իրենց համագործակցությունը հարավային Կովկասում: Այսպիսով, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սահմանափակմամբ և Եվրոպական երկրների տարածաշրջանի հանդեպ ունեցած հետաքրքրվածության բացակայության, ինչպես նաև COVID-19 վիրուսի ստեղծած համաճարակի իրավիճակում, երբ շատ երկրների ուշադրության կենտրոնում ժողովրդի առողջական բարեկեցության հարցն է, Ռուսաստանը և Թուրքիան հնարավորություն են ստացել «գողանալ» Լեռնային Ղարաբաղի գործերը Մինսկի խմբից ու դարձնել այն զուտ տարածաշրջանային հարց:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության միջազգային ԵԱՀԿ Մինսկի խմբի կաղապարից ռուս-թուրքական տարածաշրջանայինի փոխարկումը (Իրանի հավանական, բայց դեռևս անորոշ մասնակցությամբ) կարող է հսկայական ու երկարատև հետևանքների հանգեցնել: Այս համատեքստում, Ռուսաստանի «կապրենք, կտեսնենք» մոտեցումը հնարավոր է հանգեցնի իրավիճակի, որտեղ և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը հայտնվեն ռազմական փակուղում, նույնիսկ եթե երկու կողմերն էլ ինչ-որ մակարդակի «հաղթանակի» հասնեն:

Նման իրավիճակում Ռուսաստանը կգործադրի իր բազմաթիվ լծակները և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի դեմ, համոզվելով, որ նրանք կընդունեն Ռուսաստանի հարկադրած զինադադարը, որի արդյունքում մեծ հավանականությամբ Ռուսական խաղաղապահները կտեղակայվեն սահմանի երկայնքով: Հավանաբար այս նպատակին հասնելու առաջին քայլը Ռուսաստանի արտգործ նախարար Սերգեյ Լավրովի հայտարարությունն էր (որը նա արեց բախումների սկզբից 4 օր հետո), որ Մոսկվան պատրաստ է «որպես անկողմնակալ անդամ, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում» ընդունել և՛ Հայաստանին, և՛ Ադրբեջանին հնարավոր համաձայնության հասնելու նպատակով:

Թուրքիայի տեսանկյունից, վերջին բախումներից և հակամարտության լուծմանը ուղղված Ռուսաստանի միակողմ/տարածաշրջանային դիվանագիտությունից Անկարայի ստանալիք «ավարը» կարող է կրկնապատկվել. Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կհասնի ռազմական և դիվանագիտական հաղթանակի, և ինչն ավելի կարևոր է, կուժեղացնի Թուրքիայի իշխանությունը Ադրբեջանում:

Չնայած սեպտեմբերի 29-ին արված Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի՝ հակամարտությունը զսպելու և դրա քննարկումը ԵԱՀԿ համակարգում շարունակելու կոչին, պարզ է դարձել, որ Մինսկի խումբը հակամարտության անդամ երկրների համար որոշիչ դեր չի խաղում, հատկապես Ադրբեջանի համար:

Հաշվի առնելով Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող դեռ անավարտ ռազմական գործողությունները, հակամարտության հավանական անցումը բազմակողմ հիմքից (ԵԱՀԿ Մինսկի խումբ) տարածաշրջանայինի (ռուս-թուրքա-իրանական) ցույց է տալիս որ Ռուսաստանը և Թուրքիան արևելքին իրենց տարածաշրջանում գործող կողմ չեն համարում: Իրենց ընտրությամբ, թե պատահական համընկնումով, երկու տարածքային ուժերը պատրաստ են սահմանել և երկկողմանի կիրառել իրենց սեփական անվտանգության մարտավարությունները հարավային Կովկասում, միայն ձևական և անտարբեր մոտեցում ցուցադրելով Արևմուտքի առարկություններին:

Այս հոդվածում արտացոլված տեսակետերը բացառապես հեղինակինն են և չեն արտահայտում Ալ-Ջազիրաի խմբագիրների դիրքորոշումը:

Թարգմանությունը՝ Նարեկ Մխոյանի

Ղեկավար՝ Հասմիկ Մատիկյան